

Բ Ա Ն Ա Հ Յ Ո Ւ Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Ф О Л Ь К Л О Р  
F O L K L O R E

ՀՏԴ՝ 398.2

ԽԻԿԱՐ ԻՄԱՍՏՈՒՆԻ ՍՅՈՒԺԵՆԵՐԸ  
ՇԻՐԱԿԻ ԵՎ ԿԱՐՍԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

*Էսթեր Խեմյան*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

**Բանալի բառեր՝** *գրույց, խրատ, սկզբնաղբյուր, դպիր, պատում, տարբերակ, խորհուրդ, պուժե, գործառույթ:*

Հայ վիպական բանահյուսության պատմավիպական կերպարների շարքում ուրույն տեղ է գրավում Խիկար Իմաստունի կերպարը: Հայաստանի տարբեր պատմաագագրական տարածաշրջանների բանահյուսական ժառանգության մեջ պահպանվել են Խիկար Իմաստունի մասին գրույցներ, որոնց պուժեների հիմքում ընկած են խրատաբանության և մտավոր մրցամարտով փորձության ենթարկվելու մոտիվներ: Խիկարյան գրույցներում ներկայացվում են մարդ-անհատի վարքի ընդունված կանոնները հասարակության մեջ: Խիկարի խրատներն ուղղված են բոլորին՝ թե՛ թագավորական պալատում գտնվող բարձրաստիճան մարդկանց, թե՛ ծառաներին և թե՛ հասարակության ստորին խավը ներկայացնողներին: Այդ խրատներն ուսուցանում են, թե հասարակության տարբեր խավերի մարդկանց փոխհարաբերություններն ինչ ձևով պետք է զարգանան, և յուրաքանչյուրն ինչ պահվածք պետք է ունենա համապատասխան միջավայրում: Որպես իմաստուն անհատ՝ Խիկարը հայտնի է նաև մտավոր մրցամարտերում հնարամտությամբ, խելացիությամբ ու տրամաբանական վերլուծություններով հակառակորդներին հաղթելու կարողությամբ:

**Նախաբան.** Մերձավորարևելյան տարածաշրջանի ժողովուրդների հետ դարավոր շփումները զգալի ազդեցություն են թողել հայ ժողովրդական բանահյուսության երկացանկի վրա: Բանավոր և գրավոր ճանապարհով անվանակիր և անանուն մի շարք հերոսների մասին պատմությունները փոխառվել և տեղայնացվել են՝ հարստացնելով հայ վիպական բանահյուսության ժառանգությունը:

Արևելյան պատմավիպական հերոսների շարքում Խիկար Իմաստունը առանձնահատուկ տեղ է գրավում: Խիկարի գրույցները, սկզբնավորվելով ասորաբաբելական միջավայրում, շուրջ երկուսուկես հազարամյակ ակտիվ փոխանցումներով ու զարգացումներով կենցաղավարել են մերձավորարևելյան ժողովուրդների գրավոր և բանավոր ավանդության մեջ:

Ըստ ուսումնասիրողների քննության՝ Խիկար Իմաստունն իրական պատմական անձնավորություն է և եղել է Ասորեստանի թագավոր Մենեքերիմի դպիրն ու խորհրդականը: Խիկարի գրույցների պահպանված նախնական բնագրերը ասորական տարբերակի թարգմանություններն ու զարգացումներն են հրեական, արամեական, եթովպական, արաբական, հայկական և այլ ժողովուրդների գրական ավանդության մեջ: Խիկարի գրույցների գրավոր տարբերակները բազմակողմանի քննության են ենթարկվել գիտնականների կողմից:

Դեռևս XVIII դ. ուսումնասիրողներն ուշադրություն են դարձրել Խիկարի պատմությանը և այն տարբերակներին, որոնք հիշեցնում կամ գրեթե նույնությամբ կրկնում են միմյանց: Հատկապես Եգոպոսի կենսագրության բաբելոնյան հատվածը անունների տարբերությամբ համընկնում է Խիկարի պատմությանը<sup>1</sup>: Նինվեի Մենեքերիմ թագավորի փոխարեն հանդես է գալիս Բաբելոնի թագավոր Լիկուրգոսը, Խիկարի փոխարեն՝ Եգոպոսը, Եգիպտոսի փարավոնի փոխարեն՝ Եգիպտոսի Նեկտանեբոս թագավորը: Գիտնականներն ընդհանրություններ են նկատել Խիկարի պատմության և Տովբիթի գրքի միջև՝ համարելով, որ այն կարող էր Խիկարի պատմության սկզբնաղբյուրը լինել<sup>2</sup>: Ընդհանրությունները նկատելի են նաև Լոխմանի գրույցներում, միջագետքյան և արևելյան տարբեր ժողովուրդների բանահյուսական ավանդության մեջ<sup>3</sup>, «Հազար ու մի գիշեր» հեքիաթաշարում: Խիկարի պատմության հիմնական սյուժեն ձևավորվել է Խիկարի կողմից քեռորդուն որդեգրելու և նրան կրթելու խնդրի շուրջ: Իր տեսակի մեջ այս ստեղծագործությունը մի յուրօրինակ ուսուցողական ձեռնարկ է մատաղ սերնդին

<sup>1</sup> Եգոպոսի առակները, Եր., «Հայաստան» հրատ., 1990, էջ 61:

<sup>2</sup> Գիրք բանից Տովբիթայ.- Աստուածաշունչ. Մատեան Հին ու Նոր Կտակարանաց, հ. երկրորդ, Վենետիկ, Տպարան ի գործարանի Սբ Ղազարու, 1805, էջ 510-534:

<sup>3</sup> Мудрость Хикара и басни Лукмана, Петербург, Госиздат, 1920; Юсуф Хаттар Мухаммед, Мудрости Лукмана Хакима. Книгу с арабского перевел Ильяс Зинатулла, Уруссу, Татарстан, Изд-во «Иман», 2002.

կրթելու և դաստիարակելու համար: Խրատների շարքը, որ կիրառում է Խիկարը, Հին աշխարհում ընդունված չափանիշների համեմատ ուսուցանում է աշակերտին վարքի ու պահվածքի կանոններ:

Ակնբախ է, որ Խիկարի պատմության սկզբնաղբյուրը փոխանցվել է ոչ միայն «հորիզոնական» (այսինքն՝ միևնույն ժամանակաշրջանում ապրող ազգերի միջև գոյություն ունեցող բազմաբնույթ հարաբերությունների միջոցով), այլև «ուղղահայաց» ճանապարհով (այսինքն՝ նախնիներից՝ հետագա սերունդներին): Ուստի պրպտումները տանում են դեպի տարածաշրջանի վաղնջական մշակույթներ: Հին Միջագետքի հնագույն շումերական մշակութային շերտը ներառում է նաև իրատաբանության և բարոյախոսության բանահյուսության նախնական ժանրերը, որոնք կիրառվել են շումերական դպրոցներում (մ.թ.ա. IV-II հազարամյակի սկիզբ): Ուսումնական տեքստերի մեջ առաջնությունը տրվել է առած-ասացվածքներին, որոնց հակիրճությունն ու իմաստությունը երկու կարևոր գործառույթ են ունեցել. նախ դրանց սեպագրերը ֆիքսվել են կավի սալիկների վրա, ապա դրանց գործնական կիրառության հնարավորությունը նպաստել է աշակերտներին ուսուցանելու, կրթելու և դաստիարակելու որպես օրինավոր քաղաքացիների: Շումերական «Հայրը և իր անմիտ որդին» սալիկը բարոյախոսության և իրատաբանության նախնական օրինակն է, որը բազմաթիվ տարբերակներով հետագայում շրջանառվել է մերձավորարևելյան տարածաշրջանի ժողովուրդների մեջ: Հետևաբար Խիկարի պատմության սկզբնաղբյուրն ավելի շուտ է ձևավորվել, բայց սալիկները հայտնաբերվել են ավելի ուշ և հասու չեն եղել առաջին ուսումնասիրողներին: Անդրադառնալով Խիկարի պատմությանը՝ պետք է նկատել, որ Խիկարը թագավորի դպիրն էր, այսինքն՝ նա վարում էր արքունի գրագրությունները, ուներ մեծ լիազորություններ և արտոնություններ: Ժողովրդական պատումներից մեկում բանասացը գունեղ ներկայացնում է դիվանապետի արհեստավարժությունն ու թագավորի անկարողությունը. «Ղոռոյի դեսպանը նամակը բերեց տվեց Լորոյին ու սուսուփուս գնաց: Լորո թագավորն անգրագետ էր, մի զարմացեք, էրեխեք, ոնչ էլ ծծղացեք, դուք պատմությունն էք սովորում, բա ֆռնանգների թաքավոր Կառլոս Մեծն անգրա-

<sup>4</sup> Sara Graca da Silva and Jamshid J. Tehrani, Comparative phylogenetic analyses uncover the ancient roots of Indo-European folktales (Сравнительный филогенетический анализ выявляет древние корни индоевропейских сказок), Published: 01 January 2016, Ֆիլոգենետիկ մեթոդը մշակվել է կենսաբանության մեջ: Ներկայումս այն կիրառվում է նաև բանագիտության մեջ՝ միջազգային հեքիաթային տիպերի միջմշակութային բաժանման վերլուծության համար: <http://inosmi.ru/science/20160408/236046033.html>.

<sup>5</sup> Афанасьева В. Литература Древнего Двуречья//История всемирной литературы, т. I, Изд. “Наука”, М., 1983, с.96-98.

գետ չէ՞ր: Անգրագետ թաքավոր շատ ա հելլել, Լորոն էլ անգրագետ էր: Լորո թաքավորը կանչեց հիրա դիվանապետին ու նամակը տվեց, որ կարթա»<sup>6</sup>: Այսինքն՝ ժողովրդական պատումներում ևս կարևորվում է Խիկարի դերը պետական գործերում:

Հին ժամանակներից մերձավորարևելյան տարածաշրջանի ժողովուրդների մոտ գրագրությունը պատվավոր մասնագիտություն էր և ժառանգաբար փոխանցվում էր: Հատկապես ձևավորված հայրիշխանության ինստիտուտը տնտեսական պայմանների թելադրանքով առաջադրում էր սերնդափոխության և հասարակական աստիճանակարգի սեփական կանոնակարգը, որը պահպանվում, կատարելագործվում և փոխանցվում էր սերնդեսերունդ: Հետևաբար գոյություն ունեցող կարգի համաձայն՝ անժառանգ Խիկարին որդի էր պետք, որ նրան փոխանցեր ոչ միայն իր հարստությունը, այլև մասնագիտությունն ու պաշտոնն արքունիքում: Որդեգիր Նաթանին նա կրթում և դաստիարակում է դարերով մշակված բարոյախրատական կանոններով. «Լսի՛ր ինձ, որդյա՛կ իմ Նաթան, ա-կա՛նց դիր իմ խոսքերին և հիշի՛ր դրանք, ինչպես խոսքերն աստծո»<sup>7</sup>, որին հաջորդում է առած-ասացվածքների, խրատների, ժողովրդական իմաստությունների շարքը՝ իրենց բարոյախրատական և գործնական նշանակությամբ:

Խրատաբանությունը կազմում է խիկարյան պյուժեների առանցքը: Հատկանշական է, որ այդ խրատներից շատերը համառոտ պյուժեի վրա են կառուցված, և իմաստի ստուգաբանությամբ ու դրանից արված եզրակացությամբ որոշակիանում է խրատի գործնական-կիրառական նշանակությունը: Օրինակ. «Որդեակ, լեզուն հարցաւ գլխոյն, թէ հալո ինչ է: Ասաց, թէ քանի դու լուռ կաս, ես խիստ հանգիստ եմ»,<sup>8</sup> կամ՝ «Որդեակ, եղեր ինձ որպէս խլուրդն, որ ելաւ ծակէն և այլ ընդ այլ գնաց, վասն աչաց չի տեսանելոյ, և արձակեցաւ արծիւ մի, էառ գնա: Ասէ խլուրդն. Եթէ ոչ էր զգալիքս ի վերայ իմ գալոց, յիմ տեղն էի կացեալ խաղաղական կենօք»<sup>9</sup>:

Այսպիսով՝ Խիկարի պատմության առանցքը կազմող խրատաբանության ակունքը շուրջերական բանավոր մշակույթն է, որի պահպանված գրավոր տարբերակները հուշում են նրանց կենսունակությունն ու անցած ճանապարհը մինչև

<sup>6</sup> «Խիկար».- ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ (այսուհետև՝ ՀԱԻԲԱ), FFXII: 2019-2023, բանահավաք՝ Գ. Ստեփանյան, բանասաց՝ Ա. Զիգիլյան, Սևանի շրջանի Դոմաշեն գյուղ:

<sup>7</sup> Խիկար Բմաստունից մինչև Ջանոն, Երևան, «Հայաստան» հրատ., 1990, էջ 12:

<sup>8</sup> Պատմութիւն և խրատք Խիկարայ Բմաստոյ (հայկական խմբագրություն), գիրք Ա, աշխատասիրությամբ Ա.Ա. Մարտիրոսյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 188:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 171:

ասուրաբաբելական, միջագետքյան ժողովուրդների բանավոր և գրավոր մշակույթ, ինչպես նաև ներկայացնում են բանահյուսական ժանրերի շարունակականության, կերպարանափոխվելու և գոյատևման զարմանահրաշ ֆենոմենը:

Նյութերի համադրությունից ուրվագծվում է մեկ ընդհանրական մոդել՝ շումերական անանուն գրագիր հայր → արքայական դպիր Խիկար Իմաստուն → Եզոպոս → Լոխման → բանահյուսական բազմաթիվ անանուն հայրեր, որոնք նույն սկզբունքով և խրատանիների հիմնականում կրկնվող ասույթաբանական հարուստ միավորների միջոցով ուսուցանում, կրթում ու դաստիարակում են իրենց հարազատ և որդեգիր զավակներին՝ ակնկալելով մեծացնել արժանավոր ժառանգորդ:

Շումերական ուսումնական տեքստերից՝ Էդուբիից (թարգմանաբար՝ «սալիկների տուն») սկզբնավորված «Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ» ստեղծագործությունը մեծ մասսայականություն է վայելել, թարգմանվել բազմաթիվ լեզուներով, փոփոխվել և հավելումներ ձեռք բերել<sup>10</sup>:

Հայկական ձեռագրերում Խիկարի պատմության հիմնական սյուժետային գիծը պահպանված է, այն է՝ անժառանգ Խիկարը որդեգրում է իր քրոջ որդուն՝ Նաթանին, կրթում և դաստիարակում է նրան, որպեսզի դարձնի իր իրավահաջորդը և ունեցվածքի տերը: Սակայն ապերախտ քեռորդին չի արդարացնում նրա հույսերը: Նա թագավորի մոտ զրպարտում է Խիկարին: Թագավորը հրամայում է մահապատժի ենթարկել Խիկարին ու զրկվում է իր իմաստուն խորհրդականից: Սակայն Խիկարի ընկերը՝ Աբուսմաքը, թագավորի հրամանը չի կատարում և նրան թաքցնում է գետնափոր տան մեջ: «Եւ իբրև լուաւ փարաւոն, եթէ սպանաւ Խիկար, ուրախ եղև յոյժ և գրեաց հրովարտակս առ արքայն Սենեքարիմ, բանս հարցուկս»<sup>11</sup>: Իմաստուն խորհրդականի մահը հնարավորություն է ընձեռում փարավոնին՝ հաշվեհարդար տեսնելու հակառակորդի հետ: «Եւ առաքեաց փարաւոն հրովարտակս առ Սենեքարիմ արքայ, որ ունէր օրինակ զայս. «Ի փարաւոնէ առ Սենեքարիմ արքայ, ողջոյն: Կամիմ ապարանս շինել ընդ երկինս և ընդ երկրի ի մէջ: Տես ստէպ և առաքեա առ իս այր իմաստուն և ճարտար, զի արասցէ զկամս իմ: Իսկ թէ անփոյթ արասցես զհրամայեալս յինէն, յարուցեալ եկից բազում զօրօք և բարձից զթագաւորութիւնդ քո»<sup>12</sup>: Անելանելի վիճակում հայտնված թագավորը հասկանում է, որ ճակատագրական սխալ է թույլ տվել և ափսոսում է Խիկարի կորստյան համար: Խիկարին դուրս են բերում

<sup>10</sup> Афанасьева В., նշվ. աշխ., էջ 114:

<sup>11</sup> Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ, գիրք Ա, էջ 111:

<sup>12</sup> Նույնը:

թաքստոցից, և նա լուծում է անհնարին խնդիրները ու ազատում թագավորությունը հարկատվությունից: Իր ծառայության դիմաց Խիկարը թագավորից խնդրում է իրեն հանձնել քրոջ որդուն, որպեսզի իր բացթողումները շտկի և նորից կրթի նրան. «Որդեա՛կ, որ ընդ ականջն ոչ լսէ, ընդ թիկունս լսեցուցանեն»<sup>13</sup>՝ մտադրվելով կրթությունը զուգակցել գանահարությանը, որ կրթվողը մարմնապես զգա կրթության անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Հայ մատենագիտության մեջ պահպանված Խիկարի գրույցների ձեռագրերն իրենց վրա կրում են ընդօրինակող գրիչների «ստեղծագործական ազատ մոտեցումների» ակնհայտ դրսևորումներ, որոնց հետևանքով բնագրերում ի հայտ են եկել բազմաթիվ հավելագրումներ և նորամուծություններ<sup>14</sup>: Դրանք հիմնականում այն խրատներն ու ասույթաբանական տարբեր միավորներն են, որոնք ավելացվել են թարգմանիչների ու գրիչների կողմից, այդ իսկ պատճառով խրատների քանակը տարբեր բնագրերում տարբերվում է:

Հայ բանահյուսական ավանդության մեջ Խիկարի մասին պատումները սիրված ու տարածված են եղել և ընդգրկել են Հայաստանի գրեթե բոլոր պատմաագագրական տարածաշրջանները: Անկասկած, հայ ընտանեկան կյանքում ընտանիքի գլխավորի հեղինակության ու պաշտամունքի առկայությունը, երիտասարդ սերնդին կրթելու և դաստիարակելու անհրաժեշտությունը նպաստել են խիկարյան պատումների ներհուսքին հայ բանահյուսական ավանդույթ: Կարս-շիրակյան բանահյուսական ժառանգության մեջ խիկարյան սյուժեները ներկայացնում են CYC 922A=AA\*922 I<sup>15</sup>, ATU 922A<sup>16</sup> տիպը, որը արտացոլվել է հետևյալ սյուժեներում: Հակառակորդ թագավորը Խիկարի տեր-թագավորին առաջարկում է պալատներ կառուցել օդի մեջ: Խիկար Իմաստունը հնարամտորեն լուծում է անհնարին խնդիրը: Երկրորդը ATU 910 տիպն է<sup>17</sup>, ըստ որի՝ Խիկարը կամ որևէ այլ հերոս (Դանանդա Բահլուլ, Պըրը Պուլի) խելացի խորհուրդներով մահապատժից փրկում է իր հյուրին:

Ախուրյանի Ջաջուռ գյուղում 1969 թ. գրառված «Իմաստուն Խիկար» պատումը<sup>18</sup> Խիկարի հանրահայտ գրական տարբերակների բանավոր արձագանքն

<sup>13</sup> Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ, գիրք Ա, էջ 119:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>15</sup> Сравнительный указатель сюжетов. Восточнославянская сказка, Л., Изд-во «Наука», 1979, с. 235.

<sup>16</sup> Uther H.-J., The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales. and Realistic Tales, with an Introduction, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011, p. 554.

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 527-528:

<sup>18</sup> «Իմաստուն Խիկար».-ՀԱԻԲԱ FFVIII: 2956,01-2965,00, բանահավաքներ՝ Սարգիս Հարությունյան, Արուսյակ Սահակյան, բանասաց՝ Ախուրյանի շրջանի Ջաջուռ գյուղից՝ Ավետիք Հարությունյան, 1969:

է: Պատումը ներկայացնում է Խիկարի պատմության այն դրվագը, ըստ որի՝ Խիկարի տեր-թագավորը հակառակորդ թագավորից ստանում է սպառնազին ուղերձ հետևյալ պայմանով՝ կա՛մ իմաստունը օղի մեջ պալատներ կառուցի, կա՛մ թագավորությունը ենթարկվի իր իշխանությանը: Խիկար Իմաստունը երկու շաբաթ ժամանակ է խնդրում՝ նախապատրաստվելու համար, երեք թոչուն է բռնում և վարժեցնում, որ օղի մեջ գոռան. «քար տվեք, կիր տվեք, փայտ տվեք»: Իմաստունը ներկայանում է հակառակորդ թագավորին, բաց է թողնում թոչուններին և պահանջում, որ իր վարպետներին շինանյութ հասցնեն, որ նրանք օղի մեջ պալատ կառուցեն: Պարտված թագավորը հրաժարվում է իր պահանջներից:

Այս պատումի հիմքում առկա է հնագույն ժամանակների այն սովորույթը, որից օգտվում էին հին աշխարհի թագավորներն իրենց պետության սահմաններն ու ազդեցության ոլորտներ լայնացնելու նպատակով: Դա մտավոր մրցամարտն էր. այն լայն արձագանք է գտել վիպական բանահյուսության ժանրերում և բազմաթիվ տարբերակներով շրջանառվել: Դրանք իրենցից ներկայացնում էին հարց-հանելուկներ, խնդիր-հանձնարարականներ, այլաբանական երկխոսություններ, որոնք մտավոր պատերազմի զենքերն էին և, լինելով մտավոր փորձության միջոցներ, կիրառվում էին տարբեր ոլորտներում, ինչպես նաև միջպետական հարաբերություններում<sup>19</sup>: Հակառակորդ թագավորները դեսպանների միջոցով սպառնազին ուղերձներ էին փոխանակում, և մտավոր մրցամարտում պարտվող կողմը հարկատու էր դառնում հակառակորդին: Պատումի հերոսը Խիկար Իմաստունն է, որն իր թագավորին օգնում է պետական կառավարման մեջ խելացի որոշումներ կայացնելու: Խիկարի գործունեությունը նախանձ է առաջացնում հարևան թագավորների մոտ: Հարևան թագավորի առաջադրած խնդիրը նախ պատճառ է նրա երկիրը գրավելու համար, այնուհետև նա նպատակ ունի փորձության ենթարկել Խիկար Իմաստունին. «Կերտաս, կըսես, օր ինքը եղպիսի իմաստուն ունի, եթե եղ իմաստունը օղի մեջ ընձի պալաղներ շինեց, ես անպայման,- ասում է,- իմ գազազածությունը գըթուլացնեմ, չեմ հարձակվի իրան վրա, եթե ոչ,- ասում է,- անպայման գ'արձագվիմ»<sup>20</sup>: Առաջադրված խնդիրը Խիկարի մտավոր կարողությունները ստուգելու, նրա խելքն ու հնարամտությունը գնահատելու միջոց է:

Խիկարյան պատումներում Խիկարին բնորոշող գլխավոր առանձնահատկությունն իմաստությունն է, որով պայմանավորված է նրա՝ Խիկար Իմաս-

<sup>19</sup> **Խենյան Է.**, Հարց - հանելուկները և այլաբանական երկխոսությունները հայ բանահյուսության շահաբաայան սյուժեներում, Պատմաբանասիրական հանդես, հ. 3, 2019, էջ 213-243:

<sup>20</sup> «Իմաստուն Խիկար».- ՀԱԻԲՍ FFVIII: 2956,01-2965,00:

տուն անվանումը: Իր գործառույթներով Խիկարը յուրօրինակ միջնորդ է թագավորի և հպատակների, թագավորի և այլ երկրների դեսպանների միջև: Խիկարի գործողությունները պայմանավորված են տրամաբանական վերլուծության արդյունքներով, կռահողականությամբ, դիմացինի հետագա քայլը կանխագուշակելու և կանխարգելելու կարողությամբ:

Շիրակյան այս տարբերակը շեղված է բուն պատումից. այստեղ Խիկարը չի ամբաստանվում և մահապատժի չի ենթարկվում, նա պաշտոնավարում է արքունիքում և ի պաշտոնե հանձնարարություն է ստանում լուծել հակառակորդի առաջադրած խնդիրը: Առաջադրված խնդիրը՝ օդում պալատ կառուցել, հենց սկզբից ենթադրում է անհնարիություն: Նախ՝ ըստ տվյալ ժամանակի պատկերացումների՝ օդային տարածքն աստվածների տիրույթն է, որտեղ իրենց գործառույթներն են ծավալում քամու և օդի տատանումները վերահսկող աստվածներն ու թևավոր աստվածային ավետաբերները<sup>21</sup>: Տարածքը հասու չէ մահկանացուին: Առավել ևս՝ մահկանացուն չի կարող ըստ իր պատկերացումների պալատ կառուցել այնտեղ: Տարածք կարող են մուտք գործել միայն թևավոր արարածներ, հետևաբար պետք է դիմել թևավորների, այն է՝ թռչունների օգնությանը: Նա վարժեցրած թռչունների միջոցով լուծում է խնդիրը: Պատումում օգտագործվում է «դուռ» բառը, որը չի մասնավորեցնում թռչնատեսակը: Քանի որ Խիկարը թռչունների վարժեցնում է ասել՝ «քար տվեք, կիր տվեք, փայտ տվեք», պետք է ենթադրել, որ խոսքը խոսող թռչունի, այսինքն՝ թուրքակի մասին է: Այլ տարբերակում<sup>22</sup> Խիկարն օգտվում է «թառվան դռերի» ծառայությունից, որոնց վրա նստեցնում է վարժեցրած մանուկների, որոնք ասում են. «քար տուր, ցեխ տուր»: Հավանաբար «թառվան դուռ» անվանել են արծվին կամ բազեին, համենայն դեպս թռչունն իր չափերով պետք է մեծ լիներ, որ նրա վրա նստեցնեին երեխայի:

Չի բացառվում, որ այս մոտիվի ձևավորմանը նպաստել է միջագետքյան՝ արծիվի վրա նստած, երկինք բարձրացող հերոսի մոտիվը<sup>23</sup>, ինչպես նաև տարածաշրջանին բնորոշ արծվի պաշտամունքը, ըստ որի՝ արծիվը նաև հանդես է գալիս հրաշագործ օգնականի դերով: Խիկարը շահում է մտավոր մրցամարտը, հակառակորդն ընդունում է Խիկարի իմաստությունը և հրաժարվում իր պահանջներից: Խիկարյան զրույցներում մտավոր մրցամարտի մոտիվները խառնված են տարածաշրջանի ժողովուրդների կրոնական պատկերացումների,

<sup>21</sup> Мейлах М. Б. Воздух//Мифы народов мира, т. I, М., Изд-во «Советская энциклопедия», 1987, с. 241.

<sup>22</sup> ՀԱԻԲՍ ՄԲՎՄԻՑ: 8764,01-8775,00, բանահավաք՝ Գևորգ Գևորգյան, բանասաց՝ Մացակ Բոցինյան, Աշտարակ, 1970:

<sup>23</sup> Иванов В. В., Топоров В. Н. Орёл//Мифы народов мира, т. II, М., Изд-во «Советская энциклопедия», 1987, с. 258-260: Պատմություն և խրատք Խիկարայ Իմաստնոյ, գիրք Բ, Եր., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1972, էջ 142:



հավատալիքների և սովորույթների կուռ համակարգի վրա: Խիկարը տիրապետում է այդ գիտելիքներին և այն կիրառում ըստ նպատակահարմարության: Կարս-շիրակյան տարածաշրջանի սյուժեներում մրցամարտի մոտիվի հանգուցալուծումը թռչնային մոտիվի կիրառումն է՝ խմբագրված տարբերակով, այսինքն՝ արծիվը փոխարինված է խոսող թռչունով: Մրցամարտի պայմանները թելադրած հակառակորդ թագավորն ի գորու չէ շինանյութ հասցնելու օդում գտնվող վարպետներին և հանձն է առնում իր պարտությունը:

Թե՛ գրավոր և թե՛ բանավոր սկզբնաղբյուրներում Խիկարի իմաստության գլխավոր նախապայմանը խրատաբանությունն է: Որպես խրատի նյութ ծառայում են ասույթաբանական բանահյուսության ժանրերը, որոնք մեկնաբանվում ու ներկայացվում են համառոտ զրույցների ու անեկդոտների բարոյախրատական եզրահանգումներով: Խիկարի խրատներն ուսուցողական դեր և նշանակություն ունեն: Նրա խրատները երբեմն ուղիղ նշանակությամբ են օգտագործվում. «Որդեակ, յորժամ ըմպես գինի, մի՛ շատախօսիր, զի շատախօսիս՝ կռիւ լինի, և հետ կովոյն՝ սպանութիւն»<sup>24</sup>, երբեմն՝ այլաբանորեն. «Որդեակ, եղեր ինձ որպէս արջն, որ հանդիպեցաւ իշոյ միոյ և ասէ. Ողջոյն քեզ, էշ: Ասէ էշն. Այդ ողջոյնդ իմ տիրոջն պարանոցն, որ զիս արձակեաց ի մորէն, որ քեզ հանդիպեցայ և տեսի զքո գէշ երեսդ աղտեղի»<sup>25</sup>, երբեմն կարևոր միտքը համեմատության միջոցով է մատուցվում, որ լսողը եզրակացություն անի. «Որդեակ, որպէս հողն մայր է ամենայն տնկոց, նոյնպէս արբեցութիւնն մայր է ամենայն չարեաց»<sup>26</sup>:

Բանահյուսական սկզբնաղբյուրներում Խիկարի խրատները, ի տարբերություն գրական սկզբնաղբյուրների, սահմանափակ են: Դրանք պայմանավորված են սյուժեի պահանջներով և զարգացման ընթացքով: Կարս-շիրակյան բանահյուսական ժառանգության մեջ այդօրինակ սյուժեների բնորոշ տիպը Խիկարի խորհրդով մահից խույս տալու մոտիվն է: Հեքիաթի այս տիպը մեծ տարածում ունի համահայկական բանահյուսական ավանդություն և հաճախ համադրվում է այլ տիպերի ու մոտիվների: Հայ բանահյուսական ավանդություն այն երբեմն աղերսվում է Դանանդա Բահլուլի<sup>27</sup>, Պըլը Պուղու<sup>28</sup> և անանուն այլ հերոսների հետ:

<sup>24</sup> Պատմություն և խրատք Խիկարայ Իմաստոյ, գիրք Ա, էջ 230:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 241:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 234:

<sup>27</sup> «Դանանդա Պահլուլն ու իրան դոնադը».- Կարս. հայոց բանահյուսական մշակույթը (այսուհետև՝ Կարս), Կազմողներ՝ **Հարությունյան Ս. Բ., Վարդանյան Ս. Ա., Խեմչյան Է. Հ., Ղոնջյան Լ. Խ., Խեմչյան Ս. Հ.**, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2013, էջ 315:

<sup>28</sup> «Պել Պողի».- Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21, Տավուշ, Կազմող՝ **Խեմչյան Է. Հ.**, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 159:

Շիրակյան տարբերակը՝ «Իմաստուն Խիկյարի պատմությունը» վերնագրով, Սարգիս Հարությունյանը և Արուսյակ Սահակյանը գրառել են 1969 թ. Ջաջուռ գյուղում, կարսյան տարբերակը «Իմաստուն Խիկարի խրատը» վերնագրով գրառել է Եղիշե Խաչատրյանը 1975 թ. Լենինականում: Տարբերակների սյուժեները մասնակի փոփոխություններով գրեթե նույնն են: Պատումների համառոտ սյուժեն հետևյալն է. Մի չարչի որոշում է ման գալ և գտնել հռչակավոր Խիկար Իմաստունին: Նա հյուրընկալվում է Խիկարի տանը: Թագավորը Խիկարին խնջույքի է հրավիրում, վերջինս պատճառաբանում է, որ հյուր ունի և չի կարող գնալ: Խիկարին առաջարկվում է հյուրին իր հետ տանել: Ճանապարհին Խիկարը հյուրին խորհուրդներ է տալիս, թե ինչպես պետք է իրեն պահի թագավորի պալատում, որ իր հյուրընկալին չխայտառակի: «Խիկար իմաստունը դոնախին կըսէ.– Այ մարդ, կերթանք թագավորի պալատը, դու թագավորական նիստուկացին ծանոթ չես, էնպես էրա, օր նա՛ դու խայտառակ էղնիս, նա՛ էլ ես: Հըմի քեզ կըսես, թե ինչ կէնես: Օր կերթանք նես, չելնիս սեղանի վերևի գլխը նստիս, օր ամեն մարդ գա իրան տեղը նստի, քեզի տանին քցեն սեղանի ցածի կողմը: Եթե քեզի բանը չեն հարցնէ, դու չխոսիս, օր սխալ բաներ խոսիս, համ դու խայտառակ չէղնիս, համ էլ ընձի խայտառակ էնես: Մե բանը օր քեզեն չեն ուզէ, չհանես տաս: Ահան էս իրեք խրատը անկջիդ օղ կէնես, լավ միտքդ կը պահես»<sup>29</sup>: Խիկարի հյուրն անտեսում է իրեն տրված խորհուրդները և ամբաստանվում որպես գող: Թագավորը որոշում է ամբաստանյալին հաջորդ առավոտյան դատել և կախադան բարձրացնել: Առաջնորդվելով հյուրընկալության չգրված օրենքներով՝ Խիկարը խնդրում է թագավորին՝ թույլ տալ իր հյուրին տուն տանել և զիջերը պահել իր տանը: Թագավորն առարկում է, որ նա կարող է հյուրին խորհուրդներ տալ: Խիկարը երդվում է, որ հյուրի հետ չի խոսի և նրան տանում է տուն: Նա հյուրին տանում է գոմ, սկսում է ծեծել էշին: Էշին դիմելով՝ Խիկարն անուղղակի խրատում է հյուրին, թե ինչպես պետք է իրեն պահի դատարանում և ինչ ասի՝ մահապատժից խուսափելու համար: Հյուրը հասկանում է, որ էշին ուղղված խրատներն իր համար են և այս անգամ հետևում է Խիկարի խորհուրդներին ու ազատվում մահապատժից:

Պատումների այս տեսակը կառուցված է հերոսի վարքագծի երկակի դրսևորումների հակադրության վրա: Նախ՝ հերոսն անհաղորդ է մնում իրեն տրված իմաստուն խորհուրդներին և անձանթ միջավայրում կորցնելով չափի զգացումը՝ հայտնվում է անելանելի վիճակում, ապա՝ Խիկարի ջանքերի շնորհիվ ստանում է խրատների երկրորդ խմբաբանակը, որի օգնությամբ ճարպկորեն խույս է տալիս մահապատժի ենթարկվելուց: Խիկարյան սյուժեների այս տիպը

<sup>29</sup> «Իմաստուն Խիկարի խրատը».- Կարս, էջ 313:

բարոյախրատական գործառույթ է իրականացնում և ունկնդիրներին անուղղակի ճանապարհով կյանքի դասեր է տալիս: Խիկարյան բարոյախրատական պատումները հավասարակշռում են մարդու վարքի ու պահվածքի թույլատրելիի ու անթույլատրելիի սահմանները, ուշիմ ունկնդրին սովորեցնում են հասարակության անդամի ճիշտ պահվածքն ու փոխհարաբերությունների ընդունված ու դարերով մշակված կանոնները: Խիկարի խրատները կյանքի փորձով ստուգված և բյուրեղացած ճշմարտություններ են, որոնց հետևելով՝ կարելի է խուսափել անհարմար վիճակից: Խրատաբանությունն ու բարոյախրատական եզրահանգումների գործնական նշանակությունը նպաստել է այս սյուժեների տարածմանը:

Թեև Խիկարի խորհուրդներն ու խրատներն ուղղված են եղել իր որդեգրին և ուսուցողական-դաստիարակչական գործառույթ են իրականացրել, այնուամենայնիվ դրանք հասարակական վարքի կանոններ էին, որոնք կիրառելի էին յուրաքանչյուր մարդու կյանքում: Կենսափորձի վրա ձևավորված, ճանաչողական մեծ արժեք ունեցող խրատները հասարակության լայն շերտերին հասու են դարձել բանահյուսական սյուժեների միջոցով: Խրատ ստացած հերոսի վարքագիծը համոզիչ փաստարկ է եղել ունկնդիրների համար, և խիկարյան պատումները միաժամանակ ուսուցանել և դաստիարակել են հասարակության անդամներին:

Ակնհայտ է շիրակյան պատումների կապը գրավոր սկզբնաղբյուրների հետ: Ինչպես Խիկարի որդեգիրն է անտեսում նրա խորհուրդներն ու խրատները, այնպես էլ մեր քննարկած սյուժեի անհասկացող հյուրը զանց է առնում իրեն տրված խորհուրդները: Խիկարն իր հետ պալատ գնացող հյուրին զգուշացնում է. «... թագավորական պալատ կերթանք, զգուշացի՛ր: Քեզի իրեք խրատ կուդամ: Ադ իրեք խրատս ականջներդ օղ կանես և միշտ կպաշտպանես»<sup>30</sup>: Մյուս տարբերակում ասում է. «... Էնպես էրա, օր նա՛ դու խայտառակ էղնիս, նա՛ էլ ես: Հըմի քեզ կըսես, թե ինչ կենես: Օր կերթանք նես, չեղնիս սեղանի վերնի գոխը նստիս, օր ամեն մարդ գա իրան տեղը նստի, քեզի տանին քցեն սեղանի ցածի կողմը»<sup>31</sup>: Խիկարի որդուն տրված գլխավոր պատվիրաններից մեկն այն է, որ մարդ հասարակության մեջ պետք է ճանաչի իր տեղը. «Որդեակ, յորժամ կոչեն զքեզ ի պատիւ, մի՛ նստիր քան զքո լայեխիդ տեղիքն ի վեր, զի մի ասիցեն, թե ել յայդ տեղացդ և եկ ի վայր, և դու ամօթով լինիս»<sup>32</sup>:

<sup>30</sup> «Իմաստուն Խիկարի պատմությունը».- ՀԱԻԲՍ, FFVIII: 2932,01-2955,00:

<sup>31</sup> «Իմաստուն Խիկարի խրատը».- Կարս, էջ 313:

<sup>32</sup> Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստնոյ, գիրք Ա, էջ 222:

*Եզրահանգում*. Բանահյուսական պատումները ցույց են տալիս, որ Խիկարի կերպարը ժողովրդի կողմից ընկալվել է որպես մի իմաստուն, որի խրատներն ու խորհուրդները պետք են բոլորին: Խրատները և բարդ խնդիրները լուծելը Խիկարի կերպարի բաղկացուցիչ մասն են կազմում, որով նա առանձնանում է բանահյուսական մյուս կերպարներից: Խիկարյան պատումների դաստիարակչական-ուսուցողական նշանակությունը նպաստել է այդ սյուժեների կենցաղավարման և փոխանցման գործընթացին: Միջազգետրյան տարածաշրջանից փոխառյալ հերոսն ու սյուժեները հայկական միջավայրում համապատասխան լսարանի առկայության պայմաններում սերտաճել են տեղական նմանատիպ սյուժեներին և ազգային նկարագիր ձեռք բերել:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով, Խիկար Իմաստունը հայկական ծագում ունի: Չի բացառվում, որ հայ բանահյուսական ավանդության մեջ եղած տեղական խրատատու հոր մասին պատումները ձուլվեին միջազգետրյան խիկարյան սյուժեներին:

## СЮЖЕТЫ АХИКАРА ПРЕМУДРОГО В ФОЛЬКЛОРЕ ШИРАКА И КАРСА

*Хемчян Э. Г.*

**Ключевые слова:** сказание, поучение, первоисточник, писец, сказ, вариант, совет, сюжет, функция.

Вековые общения с народами ближневосточного региона оставили существенное влияние на репертуаре армянского народного фольклора. Рассказы о ряде героев с именем и без имени устным и письменным путем заимствовались и локализовались, обогащая наследие армянского эпического фольклора.

В ряду восточных историко-эпических героев Ахикар Премудрый занимает особое место. Начинаясь в ассирио-вавилонской среде, сказы Ахикара Премудрого около два с половиной тысячелетия бытовали в письменной и устной традиции ближневосточных народов активными переносами и развитиями. Согласно исследователям Ахикар Премудрый был реальной исторической личностью, писцом и советником короля Ассирии Синаххериба. Сохранившиеся начальные тексты сказов Ахикара - переводы и развития ассирийского варианта в литературной традиции еврейских, арамейских, эфиопских, арабских, армянских и других народов. Письменные варианты сказов Ахикара всесторонне исследовались со стороны ученых.

В армянской фольклорной традиции рассказы о Хикаре были любимы, распространены и включали почти все историко-этнографические регионы Армении. В карс-ширакском фольклорном наследии в основном сохранились мотивы построения дворца между небом и землей по требованию враждебного царя (ATU 922A) и

избегания от смерти по совету Хикара (АТУ 910). В вариантах этого мотива Хикар иногда заменяется Данандой Бахлулом или другим героем, как образ, имеющий аналогичные функции.

Рассказы по своей структуре сохранили хикаровские поучения, которые образуют составную часть и бесспорно имеют воспитательно-обучающее значение, способствуют процессу для того, чтобы быть любимым и для распространения сюжетов. Заимствованный герой и сюжеты в армянской среде в условиях наличия соответственной аудитории срачивались с местными аналогичными сюжетами и приобрели национальный облик.

## THE PLOTS OF AHIKAR THE WISE IN THE SHIRAK AND KARS FOLKLORE

*Khemchyan E. H.*

**Key words:** *legend, teaching, source, scribe, tale, variation, advice, plot, function.*

The centuries-old contacts with the peoples of the Middle East region left a significant influence on the repertoire of the Armenian folklore. Stories about a number of named or nameless characters in verbally and written form borrowed and localized to enrich the heritage of the Armenian epic folklore.

Among the eastern historical and epic heroes, Ahikar the Wise has a special place. Beginning in the Assyrian-Babylonian environment, the tales of Akhikar the Wise about two and a half thousand years were present in the written and oral traditions of the Middle Eastern peoples with active transformations and developments. According to the researchers, Ahikar the Wise was a real historical figure, scribe, and advisor to the king Sennacherib of Assyria. The surviving initial texts of the tales of Ahikar are the transformations and developments of the Assyrian variation in the written tradition of the Jewish, Aramaic, Ethiopian, Arab, Armenian and other peoples. Written versions of the tales of Ahikar were thoroughly researched by scientists.

In the Armenian folklore tradition, the stories about Khikar were loved, spread and included almost all the historical and ethnographic regions of Armenia. In the Kars-Shirak folklore heritage, the motives of avoiding to build a palace between heaven and earth by the request of a hostile king (АТУ 922А) and avoiding death by the advice of Khikar was largely preserved (АТУ 910). In variants of this motive, Khikar is sometimes replaced by Dannanda Bahlul or another character, as the one having similar functions.

With their structure, the plots have preserved the Khikar's teachings, which form an integral part and undoubtedly have an educational significance, and also contribute to the process in order to be loved and to spread the plots. In the presence of a corresponding audience the borrowed character and the plots in the Armenian environment merged with local similar plots and acquired a national image.

**R e f e r e n c e s**

1. **Afanas'eva V.** Literatura Drevnego Dvurech'ya//Istoria Vsemirnoj Literatury, t. I, Moskva, Izd-vo "Nauka", 1983 (**In Russian**).
2. Astuatsashunch, Matean Hin u Nor Ktakaranats, h. erkrord, Girq banic Tovbitay, Venetik, Tparan i gordsarani Sb. Ghazaru, 1805 (**In Armenian**).
3. Hay azgagrutyun ev banahiusutyun, h. 21, Tavush, kazmogh **Khemchyan E. H.**, Yerevan, HH GAA "Gitutiun" hrat., 2000 (**In Armenian**).
4. HH GAA hnagituthyan ev azgagruthyan banahiusakan arkhiv (HAIBA), FFVIII:, FFXII (**In Armenian**).
5. **Ivanov V.V., Toporov V. N.** Oriol./Mify narodov mira. T. II, M., Izd-vo "Sovetskaya enciklopedia", 1988 (**In Russian**).
6. Kars. Hayoc banahiusakan mshakuyt@, Kazmoghner: **Harutyunyan S. B., Vardanyan S. A, Khemchyan E. H., Ghrejyan L. Kh., Khemchyan M. H.**, Yerevan, HH GAA "Gitutiun" hrat., 2013 (**In Armenian**).
7. **Khemchyan E.H.**, Harts-hanelukner@ yev aylabanakan erkkhosutiunner@ haj banahiusuthian shahabasian syuzhenerum, Patmabanasirakan handes, 3, 2019 (**In Armenian**).
8. Khikar Imastunits minchev Janon, Yerevan, "Hayastan" hrat., 1990 (**In Armenian**).
9. **Mejlakh M. B.**, Vozdukh//Mifi narodov mira. T. I, M., Izd-vo "Sovetskaya enciklopedia", 1987 (**In Russian**).
10. Mudrost' Khikara i basni Lukmana, Petereburg, Gosizdat, 1920 (**In Russian**).
11. Patmuthiun yev khratq Khikaraj Imastnoj, girq A, ashkhata sirutyamb A. A. Martirosyani, Yerevan, HSSH GA hrat., 1969 (**In Armenian**).
12. Patmuthiun yev khratq Khikaraj Imastnoj, girq B, ashkhata siruthyamb A. A. Martirosyani, Yerevan, HSSH GA hrat., 1972 (**In Armenian**).
13. Sravnitel'niy ukazatel' syujetov. Vostochnoslavyanskaya skazka, Leningrad, Izd-vo "Nauka", 1979 (**In Russian**).
14. Yezoposi araknere, Yerevan, "Hayastan" hrat. 1990 (**In Armenian**).
15. **Yusuf Khattar Mukhammed**, Mudrosti Lukmana Khakima, Urussu, Tataristan, Izd. "Iman", 2002 (**In Russian**).

*Ընդունվել է՝ 04.07.2020*

*Գրախոսվել է՝ 09. 07. 2020*

*Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Էսթեր ԽԵՄՉՅԱՆ՝** բանասիրական գիտությունների թեկնածու,  
 ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
 ավագ գիտաշխատող, էլ. հասցե՝ ekhemchyan@yandex.ru